ՀՈՒՇԱԳԻՐ

ք.Արտաշատ *10.11.2010թ.*

Հայաստանի հանրապետության Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի և Ռուսաստանի Դաշնության Ռոստովի մարզի Մյասնիկյանի շրջանի վարչակազմի միջև առևտրա-տնտեսական և մշակութային համագործակցության մասին:

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանը և Ռուսաստանի դաշնության Ռոստովի մարզի Մյասիկյանի շրջանի վարչակազմը (այսուհետ Կողմեր)

- հաշվի առնելով այն, որ առևտրատնտեսական և մշակութային համագործակցությունը կարևոր գործոն է կայուն, իրավահավասար, երկարաժամկետ, երկկողմ հարաբերություններ զարգացնելու համար.
- ձգտելով զարգացնել առևտրատնտեսական և մշակութային հարաբերություններ, հիմնվելով իրավահավասարության և փոխշահավետության սկզբունքների վրա.
- ցանկանալով ստեղծել բարենպաստ պայմաններ երկու Կողմերի արտաքին տնտեսական գործունեությամբ զբաղվողների և կազմակերպությունների փոխադարձ շփումների համար.

Կազմեցին սույն Հուշագիրը ներքոհիշյալի մասին.

1. Համագործակցությունը Կողմերի միջև իրականացվում է երկու պետությունների օրենսդրությունների հիման վրա Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կառավարությունների միջև կնքված համաձայնագրերի և պայմանագրերի շրջանակներում:
2. Կողմերը ընդունում են անհրաժեշտ միջոցառումների համակարգ՝ առևտրատնտեսական և մշակութային հարաբերությունների զարգացումն ու ամրապնդումն ապահովելու ուղղությամբ:
3. Կողմերը աջակցություն են ցուցաբերում միջազգային արտադրական միավորումներ, արտասահմանյան ներդրումներով ձեռնարկություններ ստեղծելուն, տեղեկատվության փոխանակմանը, առևտրատնտեսական և մշակութային համագործակցության զարգացման հարցերում, նպաստում են ցուցահանդեսների, տոնավաճառների, կոնֆերանսների, գովազդային, խորհրդատվական և այլ միջոցառումների կազմակերպմանն ու անցկացմանը:

1. Կողմերը նպաստում են համագործակցության զարգացմանը մշակույթի, սպորտի, առողջապահության, կրթության, բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառներում: Աջակցություն են ցուցաբերում պատմության և հնէաբանական հուշարձանների պահպանման և վերականգնման բնագավառում:
2. Կողմերը մշակում և հաստատում են Ծրագրեր՝ սույն Հուշագրի դրույթներն իրականացնելու համար:
3. Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից: Դադարեցվում է, երբ կողմերից մեկը կամ մյուսը հայտնում է դադարեցնելու մասին իր մտադրությունը:

Սույն Հուշագիրը ստորագրվել է 2010թ. նոյեմբերի 10-ին Արտաշատ քաղաքում, երկու օրինակից՝ ռուսերեն և հայերեն լեզուներով իրավահավասար իրավունքներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ	ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏԻ	ՌՈՍՏՈՎԻ ՄԱՐԶԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ	ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՇՐՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝	ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ՝
Գ. Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ	Ա. Մ. ՊՈՐԿՇԵՅԱՆ